Երկրորդ ընթերցում

Կ-756[1] -10.01.2024-ՏՀ-011
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազատ տնտեսական գոտիների մասին» 2011 թվականի մայիսի 25-ի ՀՕ-193-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 11-րդ կետերում «ծավալների» բառից հետո համապատասխանաբար լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Շահագործողների ռեեստրում ներառվում են այն հայտատուները, որոնք գործարար ծրագրի վերաբերյալ ստացել են Կառավարության կողմից տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու հավանություն հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա եւ տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպչի հետ կնքել են պայմանագիր: Տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպիչը չի կարող լինել տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործող:»:

2) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մաս.

«3.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողները պետք է համապատաս-խանեն ազատ տնտեսական գոտիներում իրական ներկայության պայմաններին: Սույն մասի կիրառության իմաստով ազատ տնտեսական գոտիներում իրական ներկայության պայմաններ են համարվում՝

1) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների իրականացումը ազատ տնտեսական գոտու տարածքում: Սույն մասի կիրառության իմաստով սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունն այն գործողությունն է, որի արդյունքում ձևավորվում է (ստեղծվում է) շահագործողի՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում ձեռնարկատիրական եկամուտների առաջնային աղբյուրը՝ բացառությամբ օժանդակ գործունեության: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը սահմանում է Կառավարությունը: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում հիմնական եկամուտների ձևավորման համար անհրաժեշտ գործողությունների արտապատվիրակումն արգելված է.

2) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների իրականացում ծրագրով նախատեսված թվով որակավորված, լրիվ դրույքով աշխատողների միջոցով.

3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ ծրագրով նախատեսված ծավալով գործառնական ծախսերի միջոցով:»:

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6. Հայտատուի՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու վկայականի տրամադրման, գործողության ժամկետի երկարաձգման եւ դադարեցման, ինչպես նաեւ շահագործողի կողմից ներկայացված գործարար ծրագրին ներկայացվող պահանջներն ու գնահատման, ազատ տնտեսական գոտու շահագործողի սկզբնական եւ հերթական հայտարարագրերի հաստատման եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

4) 10-րդ մասի 2-րդ կետի բ. ենթակետում «շեղման» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության

տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանները չպահպանելու» բառերը:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 14. Ազատ տնտեսական գոտում թույլատրվող գործունեության տեսակները

1. Ազատ տնտեսական գոտում թույլատրվում է տնտեսական գործունեության ոլորտների հետեւյալ բաժիններում ներառված գործունեության տեսակների իրականացումը.

1) մշակող արդյունաբերություն.

2) գյուղատնտեսություն.

3) Էլեկտրականության, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարում.

4) թափոնների կառավարում եւ վերամշակում.

5) պահեստային տնտեսություն.

6) ուղեւորափոխադրումներ ճոպանաքարշերով, ճոպանուղիներով, ճոպանավոր վերհաններով եւ այլն, եթե դրանք ընդգրկված չեն քաղաքային եւ մերձքաղաքային տրանսպորտային համակարգում.

7) կացության եւ հանրային սննդի կազմակերպում.

8) ծրագրային ապահովման մշակում.

9) տվյալների հիմնապաշարների եւ տեղեկատվական ռեսուրսների մշակում եւ կիրառում.

10) օպերատիվ ռեժիմում կրիպտոակտիվների՝ բիտկոյների եւ այլ ալտկոյնների ստեղծում.

11) մշակույթ, զբոսաշրջություն, զվարճություններ եւ հանգիստ (բացառությամբ շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված բաժիններում ընդգրկված՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի, յուրաքանչյուր անգամ սահմանվում են ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու մասին Կառավարության որոշմամբ:

3. Ազատ տնտեսական գոտու այն տարածքում, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը, հսկիչ անցագրային ռեժիմի ապահովումը, ներառյալ՝ այդ տարածք անձանց մուտքի կարգի սահմանումը, իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները ներկայացնում են նոր սկզբնական հայտարարագրեր, որոնք ներառում են տեղեկատվություն որակավորված աշխատողների և գործառնական ծախսերի մասին:

3. Մինչև 2022 թվականի հուլիսը շահագործողների ռեեստրում ներառված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները կարող են իրականացնել իրենց գործունեությունը մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենքով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան և պարտավոր չեն մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը բավարարել սույն օրենքի 2-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պահանջները, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից պետք է ապահովեն այդ պահանջների կատարումը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

5. Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական

գործողությունների ցանկը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

~~Առաջին~~ *Երկրորդ ընթերցում*

Կ-756[1]-10.01.2024-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազատ տնտեսական գոտիների մասին» 2011 թվականի մայիսի 25-ի ՀՕ-193-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 11-րդ կետերում «ծավալների» բառից հետո համապատասխանաբար լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանների» բառերը:

~~***Հոդված 1.*** 2011 թվականի մայիսի 25-ի «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝~~

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

~~1) 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

«2. Շահագործողների ռեեստրում ներառվում են այն հայտատուները, որոնք գործարար ծրագրի վերաբերյալ ստացել են Կառավարության կողմից տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու հավանություն հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա եւ տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպչի հետ

կնքել են պայմանագիր: Տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպիչը չի կարող լինել տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործող:»:

2) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մաս.

«3.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողները պետք է համապատասխանեն ազատ տնտեսական գոտիներում իրական ներկայության պայմաններին: Սույն մասի կիրառության իմաստով ազատ տնտեսական գոտիներում իրական ներկայության պայմաններ են համարվում՝

4) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների իրականացումը ազատ տնտեսական գոտու տարածքում: Սույն մասի կիրառության իմաստով սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունն այն գործողությունն է, որի արդյունքում ձևավորվում է (ստեղծվում է) շահագործողի՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում ձեռնարկատիրական եկամուտների առաջնային աղբյուրը՝ բացառությամբ օժանդակ գործունեության: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը սահմանում է Կառավարությունը: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում հիմնական եկամուտների ձևավորման համար անհրաժեշտ գործողությունների արտապատվիրակումն արգելված է.

5) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների իրականացում ծրագրով նախատեսված թվով որակավորված, լրիվ դրույքով աշխատողների միջոցով.

6) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ ծրագրով նախատեսված ծավալով գործառնական ծախսերի միջոցով:»:

~~2) 7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6. Հայտատուի՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու վկայականի տրամադրման, գործողության ժամկետի երկարաձգման եւ դադարեցման, ինչպես նաեւ շահագործողի կողմից ներկայացված գործարար ծրագրին ներկայացվող պահանջներն ու գնահատման, ազատ տնտեսական գոտու շահագործողի սկզբնական եւ հերթական հայտարարագրերի հաստատման եւ ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

4) 10-րդ մասի 2-րդ ենթակետի բ. ենթակետում «շեղման» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանները չպահպանելու» բառերը:

Հոդված ~~2~~3. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 14. Ազատ տնտեսական գոտում թույլատրվող գործունեության տեսակները

1. Ազատ տնտեսական գոտում թույլատրվում է տնտեսական գործունեության ոլորտների հետեւյալ բաժիններում ներառված գործունեության տեսակների իրականացումը.

1) մշակող արդյունաբերություն.

2) գյուղատնտեսություն.

3) Էլեկտրականության, գազի, գոլորշու եւ լավորակ օդի մատակարարում.

4) թափոնների կառավարում եւ վերամշակում.

5) պահեստային տնտեսություն.

6) ուղեւորափոխադրումներ ճոպանաքարշերով, ճոպանուղիներով, ճոպանավոր վերհաններով եւ այլն, եթե դրանք ընդգրկված չեն քաղաքային եւ մերձքաղաքային տրանսպորտային համակարգում.

7) կացության եւ հանրային սննդի կազմակերպում.

8) ծրագրային ապահովման մշակում.

9) տվյալների հիմնապաշարների եւ տեղեկատվական ռեսուրսների մշակում եւ կիրառում.

10) օպերատիվ ռեժիմում կրիպտոակտիվների՝ բիտկոյների եւ այլ ալտկոյնների ստեղծում.

11) մշակույթ, զբոսաշրջություն, զվարճություններ եւ հանգիստ (բացառությամբ շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված բաժիններում ընդգրկված՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի, յուրաքանչյուր անգամ սահմանվում են ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու մասին ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության որոշմամբ:

3. Ազատ տնտեսական գոտու այն տարածքում, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը, հսկիչ անցագրային ռեժիմի ապահովումը, ներառյալ՝ այդ տարածք անձանց մուտքի կարգի սահմանումը, իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:»:

Հոդված ~~3~~4. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից~~2024 թվականի հունվարի 1-ից~~:

2. ~~Սույն օրենքով սահմանվող կարգավորումների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության ազատ տնտեսական գոտիների շահագործողների ռեեստրում ներառված շահագործողների վրա:~~ Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները ներկայացնում են նոր սկզբնական հայտարարագրեր, որոնք ներառում են տեղեկատվություն որակավորված աշխատողների և գործառնական ծախսերի մասին:

3. ~~Սույն օրենքով սահմանվող կարգավորումների գործողությունը չի տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության ազատ տնտեսական գոտիների շահագործողների ռեեստրում ներառված շահագործողների վրա՝ մինչեւ վերջիններիս՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու վկայականի գործողության ժամկետը լրանալը:~~Մինչև 2022 թվականի հուլիսը շահագործողների ռեեստրում ներառված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ

կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները կարող են իրականացնել իրենց գործունեությունը մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենքով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան և պարտավոր չեն մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը բավարարել սույն օրենքի 2-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պահանջները, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից պետք է ապահովեն այդ պահանջների կատարումը:

4. ~~Սույն օրենքով սահմանվող կարգավորումների գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ստեղծված ազատ տնտեսական գոտիների վրա, իսկ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում գործող ազատ տնտեսական գոտիներում սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ տնտեսական գործունեության ոլորտների բաժիններում չներառված գործունեության տեսակների իրականացումը թույլատրվում է մինչեւ սույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետի ավարտը:~~Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

5. ~~Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:~~ Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-756-10.01.2024-ՏՀ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» (Կ-756[1] -10.01.2024-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-756-10.01.2024-ՏՀ-011/0)ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառն փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով: Փոփոխությունը կատարվել է, քանի որ լրամշակված Նախագծով առաջարկվող փոփոխությունը 1-ն է:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ի մասով առաջարկվող Օրենսգրքի 126-րդ հոդվածի նոր	Ընդունվել է: Կատարվել է	Ընդունվել է:

			խմբագրությամբ շարադրվող 7-րդ մասը՝ առաջին նախադասությունից հետո առաջարկում ենք լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Շահութահարկի վճարումից չեն ազատվում «Ազատ տնտեսական գոտիների մասին» 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործունեության տեսակների իրականացման արդյունքում ազատ տնտեսական գոտու տարածքում ստեղծված (մշակված) կամ զարգացված մտավոր սեփա-կանության իրավունքի օբյեկտների վաճառքից կամ օգտագործման իրավունքով տրամադրումից եկա-մուտները (այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտի արժեքի հավելաճը), մտավոր սեփականության իրավունքի օբյեկտներ պարու-նակող ապրանքների վաճառքից ստացվող եկամուտները և մտավոր սեփականության իրավունքի օբյեկտներից ստացվող ցանկացած այլ եկամուտները:»: Նշված լրացման նպատակն է ավելի հստակեցնել ազատ տնտեսական գոտու տարածքում	համապատասխան փոփոխություն:	

			իրականացված որոշ գործունեության արդյունքում ստացված եկամուտների հարկումը:		
3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասն առաջարկում ենք հանել: Հաշվի առնելով Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում կատարվող լրացումը՝ ըստ որի հստակեցվում են ազատ տնտեսական գոտում Շահութահարկի վճարումից չազատվող 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործունեության տեսակների իրականացման արդյունքում որոշ եկամուտները, նպատակահարմար չէ սահմանել վերահսկվող գործարքների վերաբերյալ մասը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-756[1] -10.01.2024-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը: Փոփոխությունը կատարվել է, քանի որ լրամշակված Նախագծով բացի փոփոխություններից, առաջարկվում է նաև լրացումներ կատարել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի նոր լրացվող 1-ին հոդված**	Նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 1.** «Ազատ տնտեսական գոտիների մասին» 2011 թվականի մայիսի 25-ի ՀՕ-193-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 11-րդ կետերում «ծավալների» բառից հետո համապատասխանաբար լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանների» բառերը:»: Նշված լրացումը նպատակ ունի սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների մասով հստակ սահմանել սկզբնական և հերթական հայտարարագրերում անհրաժեշտ պայմանները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված (լրամշակվող 2-րդ հոդված)	Նախագծի 1-ին՝ **1)** հոդվածի «Հոդված 1. 2011 թվականի մայիսի 25-ի «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 1) 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.» բառերով: **2)** հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. 2) «3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մաս. «3.1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողները պետք է համապատասխանեն ազատ տնտեսական գոտիներում իրական ներկայության պայմաններին: Սույն մասի կիրառության իմաստով ազատ տնտեսական գոտիներում իրական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ներկայության պայմաններ են համարվում՝ ~~4)~~7) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների իրականացումը ազատ տնտեսական գոտու տարածքում: Սույն մասի կիրառության իմաստով սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունն այն գործողությունն է, որի արդյունքում ձևավորվում է (ստեղծվում է) շահագործողի՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում ձեռնարկատիրական եկամուտների առաջնային աղբյուրը՝ բացառությամբ օժանդակ գործունեության: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար		

			անհրաժեշտ հիմնական գործողու-թյունների ցանկը սահմանում է Կառավարությունը: Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում հիմնական եկամուտների ձևավորման համար անհրաժեշտ գործողությունների արտապատվիրակումն արգելված է. ~~5)~~8) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործողությունների իրականացում ծրագրով նախատեսված թվով որակավորված, լրիվ դրույքով աշխատողների միջոցով. ~~6)~~9) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ գործո-ղությունների իրականացում՝ ծրագրով նախատեսված ծավալով գործառնական		

			ծախսերի միջոցով:»: **3)** հոդվածի 2-րդ մասի «2) 7-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «3) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.» բառերով: ~~7)~~10) հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «4) 10-րդ մասի 2-րդ ենթակետի բ. ենթակետում «շեղման» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների դեպքում՝ նաև սույն հոդվածի 3.1-ին մասում նշված պայմանները չպահպանելու» բառերը:»: Վերոնշյալ լրացումների նպատակն է հստակեցնել ազատ տնտեսական գոտում իրականացվող		

			աշխարհագրորեն շարժուն (մոբիլ) գործունեություն իրականացնող շահագործողների պարտականությունները, վերջիններիս նկատմամբ կիրառվող սահմանափակումները և դրանց խախտման հետևանքները:		
4.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված (լրամշակվող 3-րդ հոդված)	Նախագծի ՝ **1)** 2-րդ հոդվածը համարակալել որպես 3-րդ հոդված: Փոփոխությունը կատարվել է համարակալման հաջորդականության պահպանման նպատակով: **2)** 2-րդ հոդվածով առաջարկվող նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով: Փոփոխությունը կատարվել է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջները:		
5.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված (լրամշակվող 4-րդ հոդված)	Նախագծի 3-րդ՝ **1)** հոդվածը համարակալել որպես 4-րդ հոդված: Փոփոխությունը կատարվել է համարակալման հաջորդականության պահպանման նպատակով: **2)** հոդվածի 1-ին մասի «2024 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերով: Նախագիծը շրջանառության մեջ է դրվել 2023 թվականին: Ուստի անհրաժեշտություն է առաջացել սահմանել Նախագծի ուժի մեջ մտնելու այլ ժամկետ: **3)** հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ		Ընդունվել է:

			հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները ներկայացնում են նոր սկզբնական հայտարարագրեր, որոնք ներառում են տեղեկատվություն որակավորված աշխատողների և գործառնական ծախսերի մասին: Վերոնշյալ փոփոխությունը նպատակ ունի հստակ սահմանելու օրենքի նախագծի ընդունումից հետո սահմանվող գործունեության տեսակներ իրականացնող (աշխարհագրորեն մոբիլ գործունեություն) շահագործողների կողմից իրականացվող հիմնական գործողությունները: 3. Մինչև 2022 թվականի հուլիսը շահագործողների ռեեստրում ներառված՝ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության տեսակներն իրականացնող շահագործողները		

			կարող են իրականացնել իրենց գործունեությունը մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող օրենքով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխան և պարտավոր չեն մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը բավարարել սույն օրենքի 2-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված պահանջները, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից պետք է ապահովեն այդ պահանջների կատարումը: Վերոնշյալ փոփոխությունը նպատակ ունի սահմանելու ընդունվող կարգավորումների գործողության հստակ շրջանակը: Բացի այդ, նպատակ ունի սահմանելու արդեն իսկ գործունեություն իրականացնող շահագործողների գործողությունները՝ վերոնշյալ Նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո: 4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ		

			իրավական ակտերը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկը սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի, ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վերոնշյալ լրացմամբ սահմանվում է սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամկետները: 5. Սույն օրենքի 3-րդ հոդվածով շարադրվող՝ «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ կետերով նախատեսված գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական		

			գործողությունների ցանկը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:»: Սույն լրացմամբ սահմանվում է սույն օրենքով նախատեսվող գործունեության արդյունքում եկամուտների ստեղծման համար անհրաժեշտ հիմնական գործողությունների ցանկի սահմանման ժամկետները:		